PRESS RELEASE

Սեպտեմբերի 14, 2012թ.

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱԺՈՂՈՎՎ ԱՄՓՈՓՎԵՑ ԱՄՆ ՄԶԳ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

ԱՄՆ ՄԶԳ Կենսաթոշակային և աշխատաշուկայի բարեփոխումների ծրագիրը (ԿԱԲԾ) սեպտեմբերի 14-ին տեղի ունեցած **«Արժանապատիվ աշխատանք և համարժեք կենսաթոշակ»** համաժողովով ամփոփեց Ծրագրի եռամյա գործունեությունը և ներկայացրեց Հայաստանում իրականացվող կենսաթոշակային բարեփոխումների ընթացքը: Միջոցառմանը հրավիրված էին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը, ՀՀ ֆինանսների նախարար Վահե Գաբրիելյանը, ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գագիկ Խաչատրյանը, Հայաստանում ԱՄՆ Դեսպան Ջոն Հեֆֆերնը և ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության ղեկավար Կարեն Հիլիարդը, ՀՀ ԱԺ պատգամավորներ, ներկայացուցիչներ ՀՀ կենտրոնական բանկից և կենսաթոշակային բարեփոխումներին առնչվող տեղական և միջազգային կազմակերպությունների ղեկավարներ, լրագրողներ:

ԱՄՆ ՄԶԳ ԿԱԲԾ-ի առաջնային նպատակն է աջակցել Հայաստանում կենսաթոշակային բարեփոխումների իրականացմանը, ամրապնդել ծերության տարիների եկամտի կառավարման համակարգը և բարձրացնել աշխատաշուկայի մրցունակությունը: 2009-2012թթ. ԿԱԲԾ-ն աջակցել է ՀՀ կառավարությանը, անհատներին, տնային տնտեսություններին և համայնքներին առավել արդյունավետ կերպով կառավարել սոցիալական ռիսկերը, ինչպիսիք են ծերությունը, կերակրողին կորցրածների կացությունը, հաշմանդամությունը և գործազրկությունը: Ծրագիրը տեխնիկական աջակցություն է տրամադրել ՀՀ կառավարությանը բազմաստիճան կենսաթոշակային համակարգը կառուցելու գործում, որն ուժի մեջ է մտնելու 2014թ. հունվարից: Նոր կենսաթոշակային համակարգը հնարավորության կընձեռի ՀՀ քաղաքացիներին երաշխավորել ֆինանսապես ապահով ծերություն՝ եկամտի աղբյուրների դիվերսիֆիկացման, այդ թվում՝ մասնավոր կենսաթոշակային ֆոնդերում խնայողություններ կատարելու միջոցով. մի հասկացություն, որը նոր է Հայաստանի համար: Ծրագիրն աջակցել է ՀՀ կառավարությանը աշխատաշուկայում ակտիվ ծրագրերի ներդրման գործում, ինչպիսիք են՝ աշխատանքի ակումբները և գործատուների խորհուրդները, մեծ ուշադրություն հատկացնելով միջազգային տնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարմանը: ԿԱԲԾ-ն առանցքային դեր ունեցավ Երևանում երիտասարդների համար առաջին աշխատատեղերի տոնավաճառը կազմակերպելու գործում՝ մեծապես համագործակցելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության հետ: Տոնավաճառի նպատակն էր նպաստել երիտասարդության գործազրկության հաղթահարմանը, հայ երիտասարդներին օգնել պոտենցիալ գործատուների հետ կապեր ստեղծելու և աշխատանք գտնելու արժեքավոր հմտություններ ձեռք բերելու գործում:

ԿԱԲԾ-ն շարունակեց նախորդ՝ ԱՄՆ ՄԶԳ Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագրի (2006-2009) և Սոցիալական անցման ծրագրի (2000-2005) նվաճումները:

###

Լրացուցիչ տեղեկատվության համար դիմել
ԿԱԲԾ հանրային կապերի պատասխանատու
Շաքե Ավոյանին
Հեռ.՝ (374 10) 529 334
Միհեր Մկրտչյան 8,